ՏԵՂԵԿԱՆՔ –ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻՆ ՀԱՐՈՂ ՏԱՐԱԾՔԻ ԱՆԱՎԱՐՏ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՕՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-ի N599-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՄԱՍՆԱԿԻՈՐԵՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. ք. Երևան , Փավստոս Բուզանդի 13-21 հասցեներում գտնվող 4200 քմ հողամասը ներկայումս հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

2. Տարածքը նախկինում ճանաչվել է գերակա հանրային շահ, ձեռք բերող «Վիզկոն» ՍՊԸ-ի կողմից իրականացվել է ֆիզիկական անձանց պատկանող հողամասերն ու անշարժ գույքը վերցնելու և իրացնելու հետ կապված աշխատանքներ, 21 ընտանիքներին իրացված գույքի դիմաց փողային հատուցման տրամադրմանը զուգահեռ «Վիզկոն» ՍՊԸ-ն «Պետության կարիքների համար անշարժ գույքի տիրապետումից և օգտագործումից հրաժարվելու, հաշվառումից դուրս գալու, դրա դիմաց բնակելի մակերես փոխհատուցում տրամադրելու մասին» 2004-2005թթ պայմանագրեր է կնքել տարածքի ևս 37 ընտանիքների հետ , որոնց դադարեցված իրավունքների դիմաց ամբողջական հատուցում տրամադրված չէ:

3. Տարածքում կառուցվելիք շենքից անշարժ գույքի ապագա վաճառքի նպատակով մոտ 71 անձից հավաքագրվել են կանխավճարի կամ փոխառության հիմունքներով գումարներ, ինչի կապակցությամբ Երևանի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների առաջին ատյանի դատարանի 04.07.2012թ դատավճռով կառուցապատողի պաշտոնատար անձ Ս.Աղազարյանը դատապարտվել է ազատազրկման, գումար վճարածները որպես տուժող են ճանաչվել 3,109,191,691 դրամ գումարով:

4. ՀՀ կառավարության 26.04.2012թ թիվ 599-Ա որոշմամբ նախատեսվել է տարածքի ուղղակի օտարում, որի չկայացման պարագայում ՀՀ Կառավարության 30.08.2012թ N1086-Ա որոշման համաձայն տարածքը դրվել է մրցույթի, որը ևս չի կայացել:

5. ՀՀ կառավարության 04.04.2013թ թիվ 342-Ա որոշմամբ հաստատվել է մեկ այլ ձախողված կառուցապատման ծրագրի առողջացման ծրագիր, որի իրականացնող ԴԻ ԸՆԴ ԷՅՋ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ն 22.11.2013թ ներկայացրել է Բուզանդի հողի ձեռք բերման առաջարկություն և անձանց կորուստների վերականգնման ծրագիր, որը հավանության է արժանացել ՀՀ վարչապետի 02.03.2012թ թիվ 194-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի 26.11.2013-թ նիստում, ինչի հիման վրա էլ մշակվել է սույն որոշման նախագիծը:

6. Որոշման ընդունման և կատարման պարագայում կլուծվի մի կողմից՝ Բուզանդի 13-21 հասցեներում անավարտ շինարարության ավարտման հարցը, մյուս կողմից Վիսկոն ՍՊԸ-ի գործունեությունից տուժած մոտ 110 անձանց բավարարում տրամադրելու խնդիրը: